

ԱՊՐԻԼԻ 24-Ը -- ՉՈՀԵՐԻ ԵՒ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ


Posted on February 10, 2015 by Keghart



Category: [Opinions](#)




[Հարություն Մարություն](#), Երևան, Փետրվար 2015

Այս աշխատության առաջին տարբերակը («Ինքնապաշտպանության ֆենոմենը Հայոց ցեղասպանության տարիներին») զեկուլցման ձևով ներկայացվել է 2014 թ. ապրիլի 21-ին Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կազմակերպած «Առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ճակատը. ցեղասպանություն, փախստականներ և մարդասիրական օգնություն» միջազգային գիտաժողովին, իսկ երկրորդ, լրամշակված տարբերակը («Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի ձեռնարկների ու միջոցառումների շրջանակներում հայությանն ուղղված խնդիրների  արծարծումը») ներկայացվել է «Հայաստան-Սփյուռք» 5-րդ համաժողովին, «Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման եվ հետևանքների վերացման գործընթացը» նիստին, 2014 թ. սեպտեմբերի 24-ին:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված ձեռնարկների ու միջոցառումների մի զգալի մասը, դատելով հրապարակում առկա նյութերից, ուղղված է լինելու աշխարհին և Թուրքիային: Սա նորմալ է և ակնկալվում էր, որ այդպես էլ պետք է լինի: Սակայն Ցեղասպանության 100-րդ տարելիցը նաև մի յուրօրինակ սահմանագիծ է կամ ելակետ ներհայկական խնդիրների լուծման իմաստով: Դրանք քիչ չեն և դրանց մի մասին մենք անդրադարձել ենք «Առաջարկություններ Հայոց ցեղասպանության 100-ամյակի նշմանն ընդառաջ» փաթեթում, որը հրատարակվել է նաև 2014 թ. ապրիլյան «Ազդակ» բացառիկում (էջ 17-24): Այստեղ մենք կցանկանայինք համառոտ շետադրել ընդամենը մեկ կետ: Մանրամասները:

[Հարություն Մարություն](#), Երևան, Փետրվար 2015

Այս աշխատության առաջին տարբերակը («Ինքնապաշտպանության ֆենոմենը Հայոց ցեղասպանության տարիներին») զեկուլցման ձևով ներկայացվել է 2014 թ. ապրիլի 21-ին Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կազմակերպած «Առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ճակատը. ցեղասպանություն, փախստականներ և մարդասիրական օգնություն» միջազգային գիտաժողովին, իսկ երկրորդ, լրամշակված տարբերակը («Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի ձեռնարկների ու միջոցառումների շրջանակներում հայությանն ուղղված խնդիրների  արծարծումը») ներկայացվել է «Հայաստան-Սփյուռք» 5-րդ

համաժողովին, «Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման եվ հետևանքների վերացման գործընթացը» նիստին, 2014 թ. սեպտեմբերի 24-ին:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված ձեռնարկների ու միջոցառումների մի զգալի մասը, դատելով հրապարակում առկա նյութերից, ուղղված է լինելու աշխարհին և Թուրքիային: Սա նորմալ է և ակնկալվում էր, որ այդպես էլ պետք է լինի: Սակայն Ցեղասպանության 100-րդ տարելիցը նաև մի յուրօրինակ սահմանագիծ է կամ ելակետ ներհայկական խնդիրների լուծման իմաստով: Դրանք քիչ չեն և դրանց մի մասին մենք անդրադարձել ենք «Առաջարկություններ Հայոց ցեղասպանության 100-ամյակի նշմանն ընդառաջ» փաթեթում, որը հրատարակվել է նաև 2014 թ. ապրիլյան «Ազդակ» բացառիկում (էջ 17-24): Այստեղ մենք կցանկանայինք համառոտ շեղադրել ընդամենը մեկ կետ: Մանրամասները:

Հայոց ցեղասպանությանն առնչվող ամենամյա հիշատակումների ժամանակ, որպես կանոն, շեղադրումներն արվում են «ցեղասպանության զոհերին», երբեմն էլ, որպես լրացում, հիշվում են հայ ֆիդայիները, ինքնապաշտպանական մարտերը: Սակայն այս «լրացումը», այնուամենայնիվ, մաս չի կազմում պաշտոնական, ինստիտուցիոնալ ձևակերպման, ինչը, մեր համոզմամբ, ուզում ենք դա թե ոչ, բերում է զոհի կաղապարի, զոհի մշակույթի գոյատևմանը նպաստելուն:

Ցանկանում ենք հիշեցնել, որ Հայոց ցեղասպանության ու, մասնավորապես, Առաջին աշխարհամարտի տարիներին առկա էին նաև այլ իրողություններ: Ռուսական կայսրությունում, Գլխավոր հրամանատարության պաշտոնական տվյալներով, պատերազմի սկզբից ի վեր Արևմտյան և Կովկասյան ճակատներում կռվող հայազգի զինվորների թիվը կազմում էր մոտ 300 հազ. մարդ: Ձևավորվեցին յոթ հայկական կամավորական ջոկատներ, իրենց կազմում ունենալով 6 հազ. հոգի: 1916 թ. նոյեմբերին ֆրանսիական զորքերի կազմում ստեղծվեց հայերից բաղկացած Արևելյան լեգեոնը (ավելի քան 5 հազ. զինվոր), որը 1918 թ. դեկտեմբերին վերանվանվեց Հայկական լեգեոն:

Հայոց ցեղասպանության տարիներին Օսմանյան կայսրությունում տեղ գտան հայերի մի շարք ինքնապաշտպանական կռիվներ: Նախ նշենք քաղաքներն ու խոշոր բնակավայրերը. Շատախ/Թաղ (1915 թ. ապրիլի 1-մայիսի 14), Վան (1915 թ. ապրիլի 7 – մայիսի 3), Շապին-Գարահիսար (1915 թ. հունիսի 2-29), Մուշ (1915 թ. հունիսի 26-29), Ֆրեստըճազ (հուլիսի 6 – 26/օգոստոսի 3), Ուրֆա (1915 թ. սեպտեմբերի 29 – հոկտեմբերի 23), Հաճըն (1920 թ. ապրիլի 1 – հոկտեմբերի 15), Այնթապ (1920 թ. ապրիլի 1 – 1921 թ. փետրվարի 8): Գավառներից. Գավաշ (Վասպուրական)՝ 1915 թ. ապրիլի 3 – մայիսի 11, Փեսանդաշտ (Շատախի գավառ, Վասպուրական)՝ 1915 թ. ապրիլի 14 – մայիսի 10, Յոզղատ գավառի (Անկարայի նահանգ) հայկական գյուղեր՝

1915-1917 թթ., Սասուն՝ 1915 թ. ապրիլ – օգոստոս, Մուսա-լեռ (1915 թ. օգոստոսի 7 – սեպտեմբերի 12), Խնուս գավառի հայկական գյուղեր (1915 թ. մայիս), Խոտորջուրի գավառ (1918 թ. հունվարի 20 – մայիս):

Ինչպես տեսնում ենք, որոշ վայրերում հայերը դիմադրել են շատ կարճ, այլ տեղերում շաբաթներ և ամիսներ շարունակ: Կազմակերպված ու չկազմակերպված, զինված ու շատ քիչ զենք-զինամթերքով: Երևույթը շատ բազմադեմ է, գնահատականները՝ տարբեր, սակայն այստեղ ցանկանում ենք շեշտել միայն մեկ բան, այն է՝ հայ քաղաքացիական բնակչությունը ոչ քիչ դեպքերում հենց այնպես չի կոտորվել, չի «մորթվել ոչխարների նման», ինչպես երբեմն հնչում է հարցին պակաս տեղյակ, առավելապես ոչ մասնագիտական շրջանակներում, տարբեր խավերի ներկայացուցիչների առօրյա խոսքուզրույցում: Առանց որևէ պաթոսի ցանկանում ենք շեշտել, որ «ոչխարի նման մորթվող ժողովուրդը» չէր կարող 1918 թ. մայիսին, դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին, պետականության բացակայության պայմաններում, բռնկվել և հաղթական ինքնապաշտպանական ճակատամարտ մղել Սարդարապատում և Ապարանում, դիմակայել Ղարաքիլիսայում, այդ կերպ արդեն արևելահայությանը փրկելով սպասվող ցեղասպանությունից:

Սակայն հայկական իրականության մեջ, արդեն շուրջ մեկ դար, պաշտոնական կամ անպաշտոն ձևով նշվում է «Հայոց ցեղասպանության զոհերի» հիշատակը: Հայտնի ու դեռևս անհայտ ինքնապաշտպանության կռիվների մասնակիցները, այս կերպ, նույնպես ներառվում են «զոհերի» շարքում: Տասնամյակներ շարունակ հենց միայն նման շեշտադրումն իր հետևից բերում է թերարժեքության բարդույթների դրսևորումներ, ցեղասպանության հիշողությունը որպես բեռ ընկալելու երևույթներ, որոշ դեպքերում էլ՝ դրանից «ազատվելուն» ուղղված գործողությունների անհրաժեշտության գիտակցում:

Պետք է նկատել, որ հիշողության վրա հենված քաղաքականությունը բյուրեղացվում է տասնամյակների ընթացքում և նրա ազդեցությունը հասարակության վրա միանգամից ու անմիջապես չէ, որ երևում է: Երբեմն հիշողության գործոնը լոկ ինքնաբուխ ձևով դրսևորվում է տվյալ հասարակության համար ճգնաժամային պահերին, երբեմն՝ համապատասխան մշակվածության պարագայում, մշտապես ներկա է հասարակության ամենօրյա կյանքում, նրա ինքնադրսևորման և ինքնության անքակտելի մասն է կազմում: Այդ քաղաքականությունը բաղկացած է միմյանց հետ անտեսանելի թելերով կապված բազմաթիվ կտորներից, որոնցից յուրաքանչյուրը, առանձին վերցրած, կարող է և էական չթվալ երկրի քաղաքական կուրսը մշակողների համար, սակայն, թերևս, այդ տարրերի համակցումն է, որ կազմում է հիշողության վրա հենված քաղաքականության ամբողջությունը:

Ցանկացած հասարակական երևույթ, որպեսզի այն ավելի ընկալելի լինի, հնարավոր լինի դրան լիարժեք գնահատական տալ ու անել անհրաժեշտ հետևություններ,

Նախընտրելի է դիտարկել համեմատությունների լույսի ներքո, քանզի հե՛նց համեմատությունների ճանապարհով է, որ ավելի լավ է երևում ցանկացած ազգային երանգ ունեցող երևույթի դրական ու բացասական կողմերը: Մեր համեմատությունը, բնականաբար, հրեաների հետ է: Ի՞նչ կերպ վարվեցին այս պարագայում նրանք:

Հրեաների պարագայում Հոլոքոստի տարիներին զինված դիմադրությունները համեմատաբար ավելի քիչ էին կամ, ավելի ճիշտ կլինի ասել, բնույթով էին տարբեր (մասնակցություն ընդհատակյա գործունեությանը ու այդպիսով՝ Դիմադրության շարժմանը, պարտիզանական ջոկատներին, դիմադրությանը համակենտրոնացման ճամբարներում և այլն), սակայն Հոլոքոստի պատմաբանները խիստ հետևողականորեն մեծ ուշադրություն են հատկացնում այդ թեմային ու, մասնավորապես, Վարշավայի հրեական գետտոյի՝ Ֆաշիստների դեմ ուղղված ապստամբությանը (1943 թ. ապրիլ-մայիս): Եվ եթե հայոց պարագայում Ցեղասպանության զոհերի հիշատակի օր է նշվում Կոստանդնուպոլսի հայ մտավորականության զանգվածային ձերբակալությունների և աքսորի սկզբի օրը, ապա հրեաների դեպքում՝ երկարատև քննարկումներից հետո, Հոլոքոստի հիշատակի օր է որոշվել հրեական Նիսան ամսվա 27-րդ օրը: Պաշտոնապես այն կոչվում է «Հոլոքոստի և հերոսության հիշատակի օր» կամ «Հոլոքոստի Նահատակների և հերոսների հիշատակի օր» կամ (Holocaust and Heroism Remembrance Day կամ Holocaust Martyrs' and Heroes' Remembrance Day, եբրայերեն՝ Yom Hashoah)

Հրեական խորհրդարանը 1953 թ. այդ օրն ընտրել է այն պատճառով, որ այն միջանկյալ տեղ է գրավում Վարշավայի գետտոյի ապստամբության սկզբի և Իսրայելի Անկախության օրվա միջև: Այսպես թե այնպես, Հոլոքոստի հիշատակի օրը, ի տարբերություն հայկականի, մի զգալի չափով վերաբերում է պայքարի, կռվելու, մարտնչելու գաղափարին: Նկատենք, որ հրեից ցեղասպանության թանգարանի, որը պաշտոնապես կոչվում է «Յադ Վաշեմ. Հոլոքոստի Նահատակների և հերոսների հիշողության իրավասու մարմին» (Yad Vashem. The Holocaust Martyrs' and Heroes' Remembrance Authority), արդեն իսկ անվանումը հուշում է ցուցադրության ուղղվածության, հետևաբար և այցելուների շրջանում ի՞նչ տիպի ինքնության տարրերի ամրապնդման կամ ձևավորման նպատակադրման մասին: Հուշահամալիրը հիմնադրված է 1953 թ. պետության խորհրդարանի որոշմամբ, և ազգային հուշահամալիրի գործառույթները հստակորեն ամրագրված են հիմնադիր օրենքում: Օրենքի ինը հոդվածները պարզաբանում են, թե ո՞վ պետք է հիշվի. զոհերը, ընտանիքները, համայնքները, հերոսները, հրեա զինվորները, պարտիզանները, վերջիններիս օժանդակողները և նրանք, ովքեր փորձում էին բարձր պահել իրենց արժանապատվությունը: Այսպիսով, ինը հոդվածներից վեցը հասցեագրված են պայքարին, դիմադրությանը: Սա բավական հստակ դրույթ է: Եվ դրա լուսաբանումը Յադ Վաշեմի հիմնական խնդիրներից է:

Հայոց պարագայում նման քայլեր չեն ձեռնարկվել: Անցել է հարյուր տարի: Ունենք

Ցեղասպանության տարիների ինքնապաշտպանական կռիվների դեռևս լիարժեք գնահատականի սպասող իրողությունը, ունենք շուրջ քսանհինգամյա ազգային պետականություն, արցախյան հաղթանակների գործոնը: Կարծում եմ, վաղուց ժամանակն է վերաիմաստավորել հիշողության օրվա խորհուրդը, ձևափոխել այն, իրականացնել առնվազն շեշտադրումների փոփոխություն և շրջանառության մեջ դնել այլ բանաձևում. «Հայոց ցեղասպանության գոհերի և ինքնապաշտպանական կռիվների հերոսների հիշատակի օր»

Հարություն Մարության

Պատմական գիտությունների դոկտոր, Հայաստանի ԳԱԱ ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, Հայոց ցեղասպանության միջազգային գործում մեծ ներդրումի համար Հայաստանի նախագահի մրցանակի դափնեկիր:

